

ՌՈՒՍԼՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

XVIII ԴԱՐՈՒՄ ԵՒ XIX-ՐԴԻ ՍԱԶՐՈՒՄ

(Ա. Պուշկինի ծննդեան 100-ամեակի առթիւ)

ՍՏ. ԼԻՍՒՅԵԱՆԻ

I

Իշխ. Վեազեմսկու կարծիքը.—Պետրոս Մեծ և ռուսաց նոր գրականութեան զարգացման ընդհանուր բնաւորութիւնը.—Ենդդ դասականութիւն և Լոմոնոսով.—Դերժաւին.—Նովիկովի շրջան.—Սանտիմենտալիստ և Կարամզին.—Ռոմանտիստ և Ժուկովսկի.—Քատիւշկով.—Պուշկինի անմիջական նախորդ.—Շիշկովականներ և Կարամզինականներ.—Սլաւոնասէրներ և արեւմտականներ.—M-me Stael-ի կարծիքը.—Գրականութեան կտրած լինելը ժողովրդից.—Պուշկինի ասպարէզ դուրս գալը

Մինչև այսօր փոքրաթիւ լաւ գրողներ կարողացան միայն քիչ շատ կերպարանք փալ մեր լեզւին, իսկ մեր գրականութեան կերպարանքը շեռ չէ պարզել, չէ որոշել։ Խոստովանում ենք համեստութեամբ, բայց և յոյսով—կայ ռուսաց լեզու, բայց շեռ չկայ գրականութիւն, հօր և արի ժողովրդի արժանաւոր արտայայտութիւն։ Այսպէս էր գրում XIX Դ. քսանական թւականներին սկզբում քննադատ իշխ. Վեազեմսկին։ Նա հեռու չէր ճշմարտութիւնից։

Մինչև Պետրոս Մեծը Ռուսաստանը ունէր գրականութիւն, բայց ոչ բանաստեղծութիւն։ Միակ երկը, որի վրայ կնքւած է ստեղծագործական երեակալութեան շրջընդ, Վեդրի արշաւանքի վիպասանութիւնն է (XII Դ.). այնուհետեւ էլ, մինչև XVIII Դ. սկիզբները, ինչպէս և նախնական ժամանակներում, ազգի գեղարւեստական պահանջը գոհացում էր ստանում միայն ժողովրդական բանա-

հիւսութիւնից: Պետրոս Մեծը, որը Պուշկինի ասելով՝ «պարուհան քանդեց» (порубилъ) Դէպի Եւրոպա, այս պարուհանով ճանապարհ բաց արեց եւրոպական քաղաքակրթութեան լայն ազդեցութիւնների համար, ի միջի այլոց և բանաստեղծական գրականութեան, այն գրականութեան, որը ոչ թէ ճշգրութեամբ արձանագրում է շրջապատող Դէպքերն ու երևոյթները, այլ հնարում է, ստեղծում է, սփռում է ընթերցողների առաջ մի նորագիւտ մտացածին աշխարհ, որը իսկապէս չկայ, բաց կարող է լինել: Սակայն Պետրոս կաջսեր սերնդին չլիճակեց փեսնել ռուս նոր գրականութեան սկզբնաւորութիւնը: Անցաւ մօտ կէս դար, մինչև որ ռուսաց հողից վեր կացաւ ստեղծագործական ոյժը. — այդ ոյժը Լոմոնոսովն էր, որը ազգային զգացմունքով ոգևորւած՝ իւր կեանքի նպատակը Դրեց ցոյց տալ, որ ռուսաց երկիրը կարող է ծնել սեփական թէ՛ շինարարներ ու Պլատոններ, և թէ՛ Հոմերոսներ: Նա անպարծառ կամեւում էր, որ Ռուսաստանը, ուրիշ ազգերի պէս, ունենայ և՛ իւր գիտութիւնը, և՛ իւր բանաստեղծութիւնը: Նա լաւ հասկանում էր, որ Դրա համար նա պէտք է իւրացնէ այն, ինչ որ կար ժամանակակից Եւրոպայում. և ահա նրանից սկսած՝ ռուսաց գրականութեան բնաւորութիւնը անցեալ Դարում էր ծառայական կախումն Եւրոպական գրականութիւնից: Արեւմտեան բոլոր գեղարւեստական ուղղութիւնները կրկնեցին Ռուսաստանում, միայն թէ աւելի պատահական և թռուցիկ կերպով:

Լոմոնոսովը մտքեց՝ կեղծ Դասականութիւն: Այս ուղղութիւնը Եւրոպայում ծագել էր բնական կերպով հասարակական և մտաւոր շարժումներից: Երբ գիտութեանց և գեղարւեստների վերածնութեան ժամանակ նոր ազգերը մօտիկից ծանօթացան յունական և հռոմէական բանաստեղծների հետ, նրանց կուրացրին հին, Դասական գրականութեան կարարելութիւնները, և նրանք սկսեցին դանդաւրել, որ իրանց ազգային լեզուն շատ աւելի աղքատ է և գրականութիւնը աւելի կոպիտ, քան թէ Դասականը: Մտնեալ այս իշխանական ստեղծագործութիւններին թէ՛ ձևերով և թէ՛ բովանդակութեամբ՝ Դառաւ նոր բանաստեղծների ընդհանուր ձգտումը: Վիպասանութեան մէջ սկսեցին հետեւել Հոմերոսին, նամանաւանդ նշականի հեղինակ Վիրգիլիոսին, ողբերգութեան մէջ՝ Սոփոկլէսին և

քնարերգութեան մէջ՝ Պինդարին, Դրական տեսութեան խնդիրներին մէջ օրէնսդիր ճանաչեց Արիստոտէլը: Բայց շատական վիպասանների, թարերգուների և քնարերգուների առաւելութեանց ուսումնասիրութիւնը շտապով էր և հարեանցի. եւրոպական գրողները իրանց եզրակացութիւնները հիմնում էին նրանց այս կամ այն՝ սխալ հասկացած յարկութեան վրայ, ընդհանրացնում էին այդ յարկութիւնը, չտեսնելով, որ այդ յարկութիւնը բացառապէս կապւած էր հին հելլանոս շարերի քաղաքական, հասարակական և ընտանեկան կազմակերպութեան հետ, և ոչ թէ գեղարվեստի էութեան հետեանք էր: Նոր շատականութեան տեսութիւնը մշակւեց գլխաւորապէս Ֆրանսիայում, որտեղ երեւացին և այս ուղղութեան առաջնակարգ բանաստեղծները: Այնտեղ արքայական կառավարութիւնը ինքը հովանաւոր կանգնեց այս գրականութեանը: Ինչպէս բոլոր քաղաքական և հասարակական գործերի տնօրինութիւնը միապետութիւնը կամենում էր իւր ձեռքն առնել, այնպէս և կամենում էր լինել միակ շտաւորը գրականական խնդիրների մէջ: 1635 թ. կարդինալ Ռիշլիէօն հիմնեց Ֆրանսիական ձեմարանը, որին պատկերած էր կազմել Ֆրանսերէնի բառարան, քերականութիւն, ճարտասանութիւն և պոետիկա: Այս աշխատութիւնները պէտք է անխախտելի օրինադրքեր լինէին բանաստեղծների գործունէութեան համար: Կեղծ շատականութեան կանոնները վերջնական ամփոփում ստացան նոյն XVII դարի երկրորդ կիսում, Լուդովիկ XIV-ի արքունի պալատագիր Բուալօի՝ „L'art poétique“ խրատական վիպասանութեան մէջ: Նա այն համոզմունքն էր յայտնում, թէ բանաստեղծութեան մէջ, ինչպէս և կեանքի միւս ասպարէզների մէջ, ամենից վեր պէտք է շատի bon sens, բանականութիւնը, որին պէտք է ենթարկեն և՛ զգացմունքները, և՛ երեւակացութիւնը: Բանաստեղծութիւնը պէտք է պարզ և հասկանալի լինի, բայց խոյս տալ ռամկանալուց, պահպանելով galanterie—նուրբ պաշտօնաւորութիւնը: Վիպասանութիւնը, որը անպապճառ բաղկացած պիտի լինի 12 կամ 24 հագներգութիւններից, պէտք է ներկայացնի հզօր կերպով զգալու և գործելու ընդունակ, արտասովոր հերոսներ, որոնք, յաղթելով անթիւ, մեծ մասամբ զերբնական արգելքների, հասնում են իրանց նպատակին: Երգը պէտք էր սկսել «եր-

գում եմ խօսքով և շինմամբ Մուսային կամ որ և է ասուածութեան: Ողբերգութեան և առհասարակ թաղերական գրածքների մէջ պիտի սլահականէին երեք միութիւններ—տեղի, ժամանակի և գործողութեան, այսինքն՝ անցքը պէտք է կարարէր մի տեղում, սկսէր և վերջանար 24 ժամում և չբարդէր կողմնակի շէպերով: Քնարերգութեան մէջ գերակշիռ տեղ էր բռնում ներքոյականը, որի մասերի յաջորդութիւնը, նաև ընդհանուր բովանդակութիւնը ճիշդ որոշած էին: Կեղծ դասական բանաստեղծի համար ամենամեծ զովասանքն այն էր, թէ նա Վերանսերէն խօսում է յունարէնի և լատիներէնի պէս: Նախադասութեան կազմութիւնը, ամբողջ սլարբերութիւններ, սլարկերներ փոխ էին առնւում հին գրականութիւնից: Յունական և լատինական շիցաբանական անունները գործ էին ածւում նոյն իսկ այնպիսի հեղինակութիւնների մէջ, որոնք վերցրած էին քրիստոնէական դարերից: Հարկաւոր էր տալանդ ունենալ, կարելի էր բանաստեղծ լինել, հետեւելով որոշ գրական կանոններին և շեկավարելով միմիայն խելքով: Սառնութիւնը, արեւստականութիւնը և հռետորականութիւնը այս ուղղութեան յարկանիշ գծերն են, մի ուղղութեան, որը կեղծ էր իւր ամբողջ էութեամբ, որովհետև սանձահարում էր ստեղծագործող երեւակայութեան թռիչքը իւր արհեստական սահմաններով,—որովհետև ուզում էր լինել յոյն և հռոմայեցի այն ժամանակ, երբ հաւատում էր քրիստոնէութեանը և ապրում էր կարարելապէս տարբեր քաղաքական, հասարակական և ընտանեկան պայմանների մէջ,—որովհետև «երգում էր», մինչդեռ իսկապէս «գրում էր», և «քնար» էր անւանում ձեռքին բռնած գրիչը, սաղաւարդ, նիզակ, նիւթ՝ նոր դարերի զինւորների զէնքերը,—որովհետև իւր դաւանած գաղափարները բոլորովին տարբեր էին հին հանրապետական և ռամկապետական գաղափարներից:

Նոր բանաստեղծները, կոչւած լինելով արքունիքին ծառայելու և իրանց տալանդով դահի փայլը պայծառացնելու, բնականաբար կողմնակից էին թագաւորական իշխանութեան և արիստոկրատ դասակարգին: Նրանց հերոսներն են կիսասուրածներ, արքաներ, թագաւորագուններ, ազնւականներ: Բոլոր հերոսների լեզւի մէջ միօրինակութիւն էր տիրում և պալատում ընդունւած պաշտօնաւոր-

րութիւն: Բանաստեղծները արհամարհանքով էին նայում ոչ թէ միայն ազգային ժողովրդական գրականութեանը, այլ և իրան ժողովրդին, (սորո ամբոխին, la vile multitude). հեղինակը գերաշատում էր հաւանականը իրականին, եթէ միայն վերջինս հալառակ էր բանականութեան, այսինքն՝ պալատի և հասարակութեան բարձր շրջանի հայեացքներին և ճաշակներին: Ամենանշանաւոր գրական գործիչները չէին կարողանում իրանց այնպէս անկախ պահել, որ չը շողքորթէին արքունիքին, հզօր մինիստրներին, ազնւականներին՝ մեծ մասամբ պարզեւներ կամ պաշտօններ ստանալու յոյսով:

Բայց քանի էլ աշխարհին կեղծ շասականները հեռու մնալ ժամանակակից խնդիրներից, այնուամենայնիւ նրանց գրածքներում միշտ ակամայ արձագանք էր գտնում շրջապատող կեանքը: Այս հոսանքը աւելի մեծ էր մանաւանդ երգիծաբանութիւնների և լուսմեղիանների մէջ, բայց և ողբերգութիւնների, ներբողականների ու վիպասանութիւնների մէջ ակամայ հին արքաները շուրս էին գալիս Լիւդովիկ XIV-ի նման, չիւցազունները՝ նրա մինիստրների նման, յունաց ազգային ժողովը՝ Ֆրանսիական պարլամենտի նման: Բայց XVIII դարում Վոլտէրի պէս հեղինակները օգտւում էին կեղծ շասական ձևերից՝ կրօնական համբերարարութեան, շաստաբազային հաւատարութեան, արդարադատութեան, մորքի ազատութեան և լուսաւորեալ դարի այլ գաղափարները քարոզելու համար: Սակայն այս ժամանակ արդէն սկսեւ էր կեղծ շասականութեան անկումը ֆրանսիայում:

Ռուսաց գրականութեան կարապետների համար ֆրանսիական կեղծ շասականութիւնը անվիճելի օրինակ էր.—նրանք կարծում էին, որ Կոռնէյլ, Ռասին, Մոլիէրը՝ Սոփոկլէսի, Եւրիպիդէսի և Արիստոփանէսի ճշմարիտ յաջորդներն են և որ՝ իւրացնելով նրանց ձևերն ու բովանդակութիւնը, Ռուսաց գրականութիւնը միանում է այն մեծ գրականական ընտանիքին, որի սկզբնաւորութիւնը ծածկւած է յոյն-հռոմէական աշխարհի ստեղծագործութեանց մէջ:

Լոմոնոսովը մանրամասն բացատրեց այն կանոնները, որով պէտք է ղեկավարել բանաստեղծական գրածքներ գրելիս: Նա բաժանեց ոճը երեք տեսակի և ցոյց տւեց, որ տեսակը պէտք է գործածել այս կամ այն շարադրութեան մէջ. այս տեսութեամբ ոճի վեհու-

Թիւնը կախած էր սլաւոներէն բառեր խառնելուց ռուսերէն լեզւի հետ: Նա մտքրեց շեշտական չափը ռուս ուրանաւորի մէջ և այդ չափով հնչուն բանաստեղծութիւնների օրինակները տւեց: Ռուսաստանը ստացաւ կանոնաւոր, ամբիծ, հէնց այնպիսի բանաստեղծութիւն, որ կարող էր մօտենալ արտասահմանեան իդէալին: Լոմոնոսովի դարոցի բանաստեղծութիւնը աշխատում է սաւառնել բարձունքում, և հէնց այս պատճառով սառն է և վըւած: Նա «երգում է» յաղթութիւններ, զահակալութիւններ, արքայազունների ծնունդներ, անւանակոչութիւններ. յունական դիցաբանութեան աստուածներն ու աստուածուհիք աջակցում են ռուս զօրքերին, նիմփաները լողանում են Նեպչի յորձանքների մէջ, ամբողջ ոլիմպիական ազգաբնակչութիւնը խլրտում է Պելորոս Մեծի պատկերը դիմաւորելիս. այս գրականութիւնը Ռուսաստանումն էլ պահում է իւր պաշտօնական և արխիտոկրատ բնաւորութիւնը, ծառայելով արքունիքին և մեծամեծներին, որոնցից բանաստեղծները նոյն իսկ պատւէրներ էին ստանում ուրանաւորներ գրելու: Այսպէս պետական քարտուղար Վոլինսկին պահանջեց արքունի դռան բանաստեղծ Տրեղնակովսկուց ներքոյական մի ինչ-որ փոխախմբութեան համար. և երբ ներքոյականը պատրաստ չէր՝ դիւրագրգիւ մեծատունը հրամայեց ծեծել նրան: Սահասարակ կեղծ դասական բանաստեղծներից շատ քչերն էին կարողանում իրանց անկախ պահել, չշողադրութել և չքսել հօրներին. այս քչերի թւումն է ինքը Լոմոնոսովը, որը իւր մեկենասին այսպէս էր գրում—«ես, ձեր բարձր գերազանցութիւն, ոչ միայն մեծատունների, նոյն³ իսկ իմ տէր Աստուծու առաջ չեմ կամենում չիմարի դեր խաղալ: Սովորաբար ողբերգութիւնները, ներքոյականները միջոց էին նւէր կամ պաշտօն ստանալու: Գրական գործիչների ստոր հասարակական դրութիւնը կախած էր ոչ միայն մէկի կամ միւսի ստորաքարը բնաւորութիւնից—այս բանում մեղաւոր է և այն հայեացքը, որ կեղծ դասականները ունէին բանաստեղծութեան դերի մասին կեանքի ուրիշ կողմերի մէջ: Տրեղնակովսկին ասում էր, որ բանաստեղծութիւնը անհրաժեշտ է, երպէս պտուղներն ու քաղցրաւենիները հարուստ սեղանի վրայ կուշտ ճաշից յետոյ: Հասկանալի է, որ այնպիսի բերանը քաղցրացնող⁴ բանաստեղծութիւնը հեռու էր ժողովրդից, որին

հարկաւոր է նախ և առաջ կուշտ հաց, և չէր հետաքրքրում նրանք որպէս և ինքը չէր հետաքրքրւում նրանով:

Կեղծ շասական շարքի պակասութիւնները առանձնապէս զարգացան Լոմոնոսովից յետոյ: Լոմոնոսովը թէև աւելի գիտնական, քան էր, քան թէ բանաստեղծ, բայց զուրկ չէր գեղարեստական ճաշակից և ստեղծագործող երևակայութիւնից. այս պարճառով այնտեղ, ուր նա խօսում է իւր սիրած առարկաների, այն է՝ գիտութեան և նրան հովանաւորող ուսու մարդկանց մասին, բնութեան և Աստուծոյ մասին, նա ճշմարիտ ոգևորւում է և տալիս է մի քանի զգացւած և վառ պատկերներ: Նրա ուսանաւորը սահուն է, լեզուն բաւականին թեթեւ և սլաւոներէն բառերի գործածութիւնը՝ չափաւոր: Բայց Լոմոնոսովի հետեւողները ծայրահեղութեան հասցրին նրա՝ պետութիւնը երեք ոճերի մասին և կամենում էին ծածկել իրանց ոգու սառնութիւնը և երևակայութեան աղքատութիւնը՝ սլաւոնական բառերի ու հին հեթանոսական ասուածների անունների չափազանց և տգէտ գործածութեամբ: Նրանք չունէին ոչ նրա գիտութիւնը, ոչ էլ նրա ճաշակը, և այսպիսով աւելի հեռացրին զբականութիւնը կեանքից: Պուշկինը ինկատի ունենալով Լոմոնոսովի այս հետեւողներին, յայտնում է ճերա ազդեցութիւնը զբականութեան վրայ փաստակար: Լոմոնոսովի հեղինակութիւնը այնպէս մեծ էր, որ մի քառորդ շար յետոյ էլ Դերժաւինի պէս հզօր տաշանդը ընկճեց նրանից:

Դերժաւինը (1743—1816) ուսաց զբականութեան մէջ առաջին ճշմարիտ բանաստեղծն է, որը գրում էր հետեւելով ներքին ձայնին և որի համար ստեղծագործութիւնը ոգու անզսպելի պահանջ էր: Կեղծ շասականութեան հետ նա ծանօթացաւ զլիտւորապէս ուսու հեղինակների միջոցով, որոնց գրածքների շրջանակները շատ աւելի սահմանափակ էին և միակողմանի, քան թէ Եւրոպայում: Այստեղ ընդհանրացած զբական կանոնները երկար ժամանակ նւիրական օրէնքներ էին նրա պէս պակասաւոր և թերի ուսում ստացած մէկի համար, և նա ամեն ճիգ թափում էր, հակառակ իւր տաշանդի թելադրութեան, չը շեղւել նրանցից: Դերժաւինը միայն այն ժամանակ համարձակ սկսեց հռանալ այդ կանոններից, երբ նրա միներբողականի մէջ պարահաբար մտցրած նորութիւնը հըր-

ճւանք առաջացրեց արքունիքում և հասարակութեան մէջ, նորութիւնն էլ՝ գովաբանութեան հետ երգիծաբանական տարրի միախառնելն էր և աւելի հաստարակ, ժողովրդական լեզւին դիմելը։ Ինքը Ղերթաւինը իւր նշանակութիւնը ուստաց գրականութեան պատմութեան մէջ այսպէս էր հասկանում, որ նա առաջինը յանդիման «զւարճախօս» (забавный)՝ ուստաց ոճով... սրտի պարզութեամբ զրոյց անել Աստուծոյ մասին և թագաւորներին ճշմարտութիւնը ժպտալով ասել։ Թէև մի տեղ նա պնդում է, որ ինքը միշտ դիմել է «միայն բնութեանը, միայն այն ճշմարտութեանը, որի հետ և իրանից յետոյ համաձայն կը լինի պատմութիւնը», բայց և այնպէս նա մինչև իւր մահը ֆնաց կեղծ-դասական բանաստեղծ և երբեք չըկարողացաւ ազատել այս արհեստական դպրոցի ազդեցութիւնից։ Նա փառաբանում էր Վատարինէ Մեծին նրա համար, որ «բանաստեղծութիւնը նրան սիրելի էր, հաճելի, քաղցր և օգտաւէտ, որպէս ահաբեկ համեղ լիմոնադ»։ Գրական աշխատանքը Ղերթաւինն էլ համարում էր պարապ ժամանակի զբաղմունք, և աւելի մեծ նշանակութիւն էր տալիս իւր պետական ծառայութեանը, որի մէջ նա բարձր աստիճանների հասաւ, ի դէպ աւած, իւր ուղանաւորների շնորհիւ։ Նա չկարողացաւ լցնել վիհը բանաստեղծութեան և կեանքի մէջ,—նրա զբաղմունքների մէջ արտադրատեղիների գտնաւորութեան միայն Վատարինէ II-ի արքունիքի փայլը, նրա պալատականների փառայեղութիւնը, նրա թագաւորութեան աշխարհալի յաղթութիւնները։ Շարունակ մաքառելով անմշակ լեզուի դժւարութիւնների, գրականական դպրոցի նեղ պահանջների, իւր վառ երեւակայութեան չափազանցութիւններ սիրող հակումների, իւր ուսման պակասութիւնների հետ, նա չըկարողացաւ դառնալ գեղարեստագէտ-բանաստեղծ։ Նրա ուղանաւորների մէջ «պէտք է զարմանալ, քննադատ Բելինսկու ասելով, «բանաստեղծութեան և գեղարեստականութեան այն լուսաճառանչ փայլերին, որոնցով այնպէս յաճախ և այնպիսի պայծառութեամբ բռնկում է այս հօր տաղանդի բանաստեղծութիւնը»։

Եթէ ուստաց գրականութիւնը յանկարծ կենդանացաւ Վատարինէ II-ի օրով, այս պէտք է վերագրել ի հարկէ մեծ մասամբ այն հանգամանքին, որ կայսրուհին անձամբ մասնակցում էր գրական

շարժման, ինքն էլ գրում էր և հովանաւորում գրողներին: Ոչ մի տեղ, ոչ առաջ, ոչ յետոյ, ոչ մի պետ աչսպէս մօտիկ կանգնած չէ եղել հեղինակներին: Նա գրում էր կեղծ լատինական ուղղութեամբ երգիծաբանութիւններ, թափերգութիւններ, առակներ և այլն, մասնակցում էր պարբերական հրատարակութիւններին. նրա նույն իսկ պետական հրովարտկները մի-մի շաբաթրութիւն էին, որոնց մէջ կայսրուհին քարոզում էր «լուսաւորեալ շարի» գաղափարները: Կայարարինէ II-ը նամակագրութիւն ունէր Վոլպէրի, Դիշերոյի և ուրիշ էնցիկլոպէդիստների հետ, յանձնեց իր Ալէքսանդր թոռան կրթութիւնը շէյքարացի Լա-Շարպիւն և ոգևորեաժ յայտարարում էր «մարդուս իրաւունքները»: Բայց այն սկզբունքները, որ հրատարակել էր Փրանսիական ժամանակակից փիլիսոփայութիւնը, բնական ծնունդ էին Ֆրանսիայի հասարակական ամբողջ կազմութեան. իսկ Ռուսաստանում եղբայրութեան, հաւասարութեան և ազատութեան գաղափարները ոչ մի կապ չունէին կեանքի հետ: Շուրջը շարունակում էր տիրել ճորտութիւնը, ազնականների և աստիճանաւորների ճնշումը: Կայարարինէ II-ին զայրացնում էր Ամբրիկայի ազատութեան կռիւը, նա չէր կարող զսպել իւր ատելութիւնը շէպի Ֆրանկլինը: Կայսրուհին և իւր «հայրենակիցները վերցնում էին ամենաազատամիտ հեղինակների գրեածքներից առանձին շարձածքներ, մութեր, իսկ ամբողջ աշխարհայեցողութեան հոյթիւնը աչքից բաց էին թողնում: Այս շարի բոլոր երգիծաբանական յարձակումները ուղղեաժ էին տգիտութեան, կոպտութեան, կաշառակերութեան, շատաստանական անարշարութիւնների և այլ աչսպիտի արարների և պակասութիւնների շէմ, որոնք մեժ մասամբ համամարշկային բնաւորութիւն էին կրում, և բոլորովին մի կողմն էին թողնում ռուսաց իրական կեանքի ամենամեժ շարիքները: Մինչև անգամ Սոլմարոկովի պէս իրանց Ռասին կամ Վոլպէր երեւակայող հեղինակները բացարձակ կերպով ասում էին—ւմեր ստոր ժողովուրդը ոչ մի ազնիւ զգացողութիւն չունիւ:

Կեղծ լատինաւորութիւնը շարունակեց իւր գոյութիւնը նոր ուղղութիւններին կից մինչև Պաշկինը, որը իւր առաջին մի քանի պատանեկական գրեածքներում հետեւում էր Դերժաւինին: Բայց XIX շարի սկզբի գրականական գլխաւոր երեւոյթների աղբիւրները

պէտք է որոնել ուրիշ տեղ, այն է նոսրիկովի շրջանի մէջ: Մի քանի ռուս մարդկանց մէջ միտք չլացաւ ընդդիմադրելու այն նիւթապաշտական ուղղութեանը, որը Ֆրանսիական փիլիսոփայութեան հետ միասին սկսել էր տարածել Ռուսաստանում: Նրանց վրայ ազդում էր Գերմանիայից գաղթած պրոֆ. Շւարցը, որը բարոյական-իմաստասիրական դասախօսութիւններ էր կարդում Մոսկւայի համալսարանում: 1779 թ. նոսրիկովը ստանձնեց Մոսկւայի համալսարանական տպարանի կառավարութիւնը: Միևնոյն ժամանակ նա և Շւարցը հիմնեցին «Բարեկամական գիտնական ընկերութիւն», որի նպատակն էր ժողովրդականացնել լաւ կրթութեան սկզբունքները, հրատարակել օգտուէտ գրքեր և հրաւիրել արտասահմանից ընդունակ ուսուցիչներ կամ կրթել այնտեղ ռուս մանկավարժներ: Շուրջ աչս ընկերութիւնը բազմաթիւ անդամներ վաստակեց, որոնք մեծ մասամբ ֆրանկ-մասոններ էին, այսինքն՝ պարկանում էին այն կրօնական-բարեպաշտական շրջանին, որի նպատակն էր մարդկային հոգին վերաշինել և ամեն յարաբերութիւնների մէջ քրիստոնէական պարտիքներով շեկավարել: Այս մարդիկ, բացի ամեն տեսակ բարեգործութիւն անելուց, հիմնում էին բազմաթիւ տպարաններ, հրատարակում էին գրքեր, մեծ մասամբ օտար, մանաւանդ գերմանական գրականութեան երկերի թարգմանութիւններ, ծանօթացնում էին արեւմտեան բոլոր ազգերի նոր հեղինակների հետ, աջակցում էին ուսումնասիրութեանց, ճանապարհորդութեանց և կատարելագործելու ձգտումներին: Առաջին երեք տարւայ ընթացքում համալսարանական տպարանը աւելի շատ գիրք տպագրեց, բան թէ նախընթաց քսանէւորտ տարւայ ընթացքում: Ընկերութեան հրատարակութիւններից մեծ գրադարաններ կազմեցին: Գաւառական քաղաքներում բացեցին մատենադարաններ, տպարաններ ընկերութեան շեկավարութեամբ: Մի խումբ երիտասարդներ կրթեցին այս ընկերութեան հիմնարկութիւնների՝ Մանկավարժանոցի, Թարգմանչական Սեմինարիայի, Համալսարանական ժողովի մէջ. այս տեղից դուրս եկան Կարամզինը, Ժուկովսկին, Տուրգենև եղբայրները (համալսարանի վերտեսչի որդիք, յայտնի Տուրգենևի ազգականներ), որոնք յետոյ մեծ դեր խաղացին XIX դ. սկզբում: Ամենը՝ ինչ որ նշանաւոր բան կար գրականութեան մէջ յաջորդ. քառասուն

տարւայ ընթացքում, կապած էր այս շրջանի հետ—կամ այս ընկերութեան անդամ էր եղած կամ մեծացած էր նրա աւանդութիւնների ոգով Պաշկինի ստուգիչները բոլորն էլ Մոսկայից էին: Այսպիսով այն ժամանակ, երբ միայն պետական ծառայութիւնը կամ պալատական շէնքն էին մարդուն ազդեցութիւն տալիս, նովիկովը աջողեցաւ անկախ ոյժ դառնալ և ահագին շէնք խաղալ Ռուսաստանի քաղաքակրթութեան մէջ: Ուշիկ է՝ նրա թարգմանչական զործունէութիւնը չէր շեղւաւորում գրականական որ և է նոր տեսութեան ամփոփ սկզբունքով, նա հաւաքում էր շէնքից շէնքից, ամեն գրականական ուղղութիւնից ինչ որ համապատասխանում էր շրջանի բարոյագիտական իմաստասիրական աշխարհայեցողութեանը, բայց հասարակութիւնը նրա օգնութեամբ ծանօթացաւ եւրոպական գրականութեան այնպիսի երևոյթների հետ, որոնք ընդարձակում էին մինչև այդ ժամանակ անպայման իշխող գրականական գաղափարները: Այս ճանապարհով մտան այնպիսի ազդեցութիւններ, որոնք շատ տարբեր էին կեղծ դասականութիւնից, որը Արևմուտքում արդէն լուծւում էր մտաւոր նոր նաճուճների շնորհիւ: այնտեղ արդէն սկսել էին Սենտիմենտալիստն ու Ռոմանտիստը:

Կեղծ դասականութեան անկումը սկսեց նոյն Ֆրանսիայում: XVIII դ. առաջին կիսում այնտեղ արդէն նկատւում է նոր հասարակական շարժում. սկսեց բարձրանալ երրորդ դասակարգը կամ քուրժուազիան, որը կազմել էր առուրուրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչներից: Պրամագլիսի փէրերը ոչ միայն ուղղութիւն էին տալիս նիւթական կեանքին, այլ և դարձան նոր քաղաքական և հասարակական իդէալների պաշտպաններ: Այս դասակարգին բաւականութիւն չէր կարող տալ կեղծ դասականութիւնը իւր արքունի բովանդակութեամբ, ուր դուրս էին բերւում միայն արքաներ, պալատականներ: Առաջ եկաւ քուրժուական գրականութիւն, ուր հնչում էին երրորդ դասակարգի ծիծաղն ու արտասուքը: Արդէն Վոլտերը, որը չէր կարող ազատւել կեղծ դասականութեան արտաքին ձևերից, թոյլ է տալիս բեմ դուրս բերել ամեն դասակարգերն ու ամեն կոչման մարդիկ: 1769 թ. նա գրում էր՝ «Հեղինակը, որպէս զի աւելի հեշտ ներշնչի մարդկանց այն առաքինութիւնները, որոնք անհրաժեշտ են ամեն հասարակու-

Թեան համար, ընտրել է իւր հերոսներին ստորին շասակարգից: Այսպիսի հերոսները, որոնք աւելի մօտիկ են կանգնած բնութեանը և խօսում են հասարակ լեզուով, կը թողնեն աւելի ուժեղ փայաւորութիւն և աւելի կը հասցնեն նպատակին, քան թէ սիրահարած պրինցներն ու արքանքից հալւող պրինցններն: Ռուսոսն աւելի եռանդուն կերպով կանգնեց կեղծ շասականութեան դէմ: Նրա «Նոր Նշոյից» վէպը արդէն զբաւած է նոր ուղղութեամբ, սենտիմենտալական: Այս ուղղութեան ամենափայլուն ներկայացուցիչը Ֆրանսիայում էր Բերնարդէն շը Սէն-Պիէրը, որը 1778 թ. հրատարակեց իւր «Պօլ և Վերտին» հովերգական վէպը. մինչև այսօր էլ այս հեղինակութիւնը հրապուրում է ընթերցողին բնութեան թարմ պատկերներով և դործող անձնաւորութիւնների յարաբերութեանց սրտաշարժ քնքշութեամբ:

Բայց ռուսաց վրայ ազդում էր աւելի ուրիշ երկրի սենտիմենտալիստը, Անդրիայինը, ուր դեռ Ռուսոսից առաջ «ընտանեկան վէպերի» մէջ սկսեցին ներկայացնել սովորական մարդկանց՝ նրանց առօրեայ հոգսերով, ուրախութիւններով ու վշտերով: Ռիչարդսոնը և Սոսերնը ռուս երիտասարդներին, մանաւանդ օրիորդների սիրած հեղինակներն էին դեռ մեր դարի սկզբում: Նոր ուղղութեան նշանաւոր ներկայացուցիչը Գերմանիայում Ասինգն էր. քայց սրա զբաւածքները Ռուսաստանում քչերին էին յայտնի: Սենտիմենտալիստը առաջին փորձն էր կեղծ շասականութիւնը իւր բռնած բարձրութիւնից փայլելու, և շուտով փեղի փեց նոր ուղղութեան՝ ռոմանտիսմին:

Փոխանակ հերոսների մեծ սխրագործութիւնները նկարագրելու՝ սենտիմենտալիստը զբաղւեց հասարակ մարդու զգացմունքներով և եղաւ առաջին քայլը դէպի հոգեբանական գրականութիւնը: Բայց զգացմունքները նա ներկայացնում էր չափազանցած զծերով.—ամբողջ ոճը արհեստական զգացւած էր լինում, հառաչանքներով, բացազանչութիւններով համեմաւած, դործող անձինք մաշւում հալւում էին, երկար ու բարակ խօսում սիրոյ, եղբայրութեան, պարտականութեան մասին: Բայց Եւրոպայում այս զգացւածութիւնը ուղղւած էր լուրջ ընտանեկան և հասարակական խնդիրների վրայ: Սիրոյ և ամուսնութեան մէջ նա պահանջում էր

անկեղծութիւն, մինչդեռ նրանք կեանքի մէջ հիմնւած էին հաշիւ և նախապաշարմունքի վրայ. ամեն տեղ, ուր գոյութիւն ունէին վշտացեալներն ու վիրաւորեալները, սենտիմենտալիսմը որոնում էր կարեկցութեան արժանի մարդկանց և շուրս բերում այս ճշմարիտ «թշուառներ» վէպերի, դրամաների, ճանապարհորդութիւնների մէջ:

Ուրիշ կերպ էր ռուսաց գրականութեան մէջ, ուր սենտիմենտալիսմը ամենափայլուն ներկայացուցիչն եղաւ Կարամզինը (1766—1826), որը չորս տարի անց էր կացրել Մոսկւայում Նովիկովի և Շւարցի ազդեցութեան տակ: Նրա առաջ դրւած էր օտար գրքերի և ամենավերջին գրականական նորութիւնների ահագին պաշար. նա թարգմանում էր, գրում էր, հետաքրքրւում էր այնպիսի հարցերով, թէ ինչպէս է հոգին միացած մարմնի հետ, մինչդեռ տարբեր տարրերից են կազմուած, և ճանապարհ ընկաւ 1789 թ. Եւրոպա բնութեան գեղեցկութիւններով զարճանալու և երկրպագելու այն գիտական և գրականական գործիչներին, որոնց երկերը նրան հիացմունք էին պատճառել դեռ Մոսկւայում: Նա հրապարակեց իւր ճանապարհորդական նամակները, որոնց ամեն էջից բուրում է սենտիմենտալիսմ: Նա անցաւ Գերմանիա, Ֆրանսիա, ապրեց մի քանի ժամանակ Պարիզում և Լոնդոնում և ծովով վերադարձաւ հայրենիք: Հէնց այն ¹⁸⁰¹ ժամանակ, երբ նոր էր բացել Ֆրանսիայում Ազգային ժողովը, նա Պարիզումն էր: Եւ ի՞նչն էր գրւում նրա ուշադրութիւնը: Ոչ թէ այն կռիւը, որ յանուն նոր գաղափարների մղում էին Միրաբոն և ժողովի ուրիշ պատգամաւորները, այլ մի ինչ-որ աբբայ, որի հետ խօսում է հին Փրանսիական թագաւորութեան մասին, ամփոստում է ընկերական ծառը, որը տապալել է պանդոկներին հարեալներից: «Ես թողի քեզ, սիրելի Պարիզ, թողի ամփոստանքով և երախտագիտութեամբ: Այժմ կալից քո երկուցթների մէջ ապրում էի ես հանգիստ և ուրախ. իբրեւ փեղեկների անհոգ քաղաքացի, դիտում էի քո յուզմունքները մաքուր սրտով, ինչպէս խաղաղ հովիւը դիտում է լեռուից ալեկոծւող ծովը, գրում էր նա Պարիզից հեռանալիս: Կարամզինի ասելով, ամեն հասարակութիւն նւիրական է արդէն այն պատճառով, որ գոյութիւն ունի: «Ամենաանկարարն» էլ պէտք է մեր մէջ զար-

մանք արծարծի իւր «հրաշալի ներշնչականութեամբ»: «Ոսկէ շարը» հնարաւոր է ամեն տեղ, ամեն տեսակ պայմանների մէջ, որովհետեւ երջանկութեան համար հարկաւոր է միայն առաքինութիւն: Բարձրագոյն իմաստութիւնը՝ լիակատար խաղաղութիւնն է և հնազանդութիւնը ճակատագրին: Երկրասարք ժամանակ Կարամզինը իւր «Ռուս ճանապարհորդի նամակների» և ապա «Թշուառ Լիզա», «Նստալիա» Բոյեարինի աղջիկ», «Մարֆա քաղաքագետուհի» վէպիկների մէջ շեռ լաւատեսութեամբ կրկնում է իւր իշխանական ձգտումները շէպի մարդկանց ազատութիւնն ու երջանկութիւնը. բայց վերջը, արդէն XIX դ., նա աւելի է քարոզում հոգու անշարժութիւն և խուսափում կեանքի խլրտումներից: Ֆրանսիական յեղափոխութեան վախճանը նրան շարժեց չափաւոր պահպանողական և նա յուսահատած սկսեց նայել մարդկութեան ապագային: Այս շրջանում նա շառաւ անհաշիւ թշնամի Ալեքսանդր I-ի նորոգչական անուրջների և նրա բարեկամների աջիւ խորհուրդների: Այս «երջանիկ Մէլցցարացիների» երկրպագուն սկսեց ծիծաղել հասարակագետութիւնների վրայ, Նապոլէոնին Վաշինգտոնից աւելի բարձրացնել և պաշտպանել ճորտութիւնն ու ասորիճանաւորութիւնը: Այս ոգով է գրած նրա «Պատմութիւն Ռուսաց Պետութեան» հրակայական գործը, որի վրայ նա աշխատել է քսան տարուց աւելի (1803—1826):

Այսպէս էր Կարամզինի գրածքների գաղափարական կողմը: Նրա «Նամակներն» անագին սպաւորութիւն թողին: Հեղինակը այնպիսի ակնածանքով և հիացմունքով էր խօսում իւր այցելած՝ գիտնական և գրականական գործիչների մասին, որ ընթերցողների մէջ վառւում էր սէր շէպի գիտութիւնն ու գրականութիւնը, Եւրոպան շառնում էր մի աւելանաց երկիր, ոչ թէ իւր զարմասէր կեանքի, այլ քաղաքակրթական առաջադիմութեան շնորհիւ: Կարամզինի վէպերի բովանդակութիւնը վերցրած էր ռուսաց ներկայից կամ անցեալից, գործող անձինք ռուս կանայք էին և տղամարդիկ, գործողութեան տեղը՝ ծանօթ գիւղեր, քաղաքներ, վանքեր: Նրբ ընթերցողը արտասուք էր թափում «Թշուառ Լիզայի» վրայ, որը իրան խաբւած տեսնելով իւր ազնական սիրահարից՝ լիճն է նետում, նա էր նկատում որ աղջիկը այնպէս չէ խօսում, զգում և մտա-

ծնում, ինչպէս մի ուրիշ դեղձկուհի. բայց չէ որ շա Ֆրանսիական հովուհի չէր, չէ որ լիճը գտնուում էր Մոսկւայի մօտ Սիմոնով վանքի մօտ—ինչ կայ որ այդ վանքը նկարագրւած էր զգուրիական աշխարհիկներով: Յափշտակութիւնը այնպէս մեծ էր, որ բազմաթիւ երկրորդականներ, որպէս և աշխիլ, գնում էին «Լիզայի լճի» ակօրը, այնտեղ անընդմեջ, հառաչում և իրանց անունները ծառերի վրայ փորագրում: Կարամզինը և իւր հետեւողները ձգտում էին պահպանել «սեղանի գոյնը»—հերոսների արտաքին հասարակական շիրքը, ազգութիւնը, սովորութիւնները, զգեստները. մի բան միայն մոռանում էին՝ մարդկային զգացմունքները, որոնք նոյնքան զանազան են, որքան առանձին մարդիկ կան: Բոլոր հերոսներին նրանք վերագրում էին իրանց զգացմունքները, մտածմունքները, աչքի տեսած շունենակով հասարակական, մտաւոր և բարոյական առանձնայատկութիւնները: Այս միօրինակութիւնը՝ շաղկապւած խորտակուելու, ընթերցողի վրայ սեղադրւած ազդելու չափազանց ակներեւ ջանքերի հետ, այժմ տախտակի են դարձնում սենտիմենտալ գլուխածքների ընթերցանութիւնը: Բայց հարիւր տարի մեզնից առաջ Կարամզինի վէպերը ծանօթացրին ուրիշ հասարակութիւնը մի նոր շշխարհի հետ, ուր մարդիկ զննահարում էին ոչ թէ իրանց սխալ գործութիւնների, այլ իրանց քնքոյշ զգացմունքների համար, ուր զգացմունքի տեսակետից բոլորն էլ իրար հաւասար էին, ուր հետաքրքրւում էին նոյն իսկ գիւղացիով: Խհարկէ այս ամենը մեղմացնում էր դարի կոշտ ու բիրտ բարքերը, բայց չափազանցած զգայնութիւնը ունէր և իւր վատ կողմերը: Այս sensiblerie-ն, նախ՝ խախտում էր հոգեկան ոյժերի հաւասարակշռութիւնը, առաւելութիւն տալով զգացմունքներին. ապա առաջ էր բերում զգացմունքի կեղծիք, տրամադրում էր ամենաչնչին դէպքում զգայնութիւն ցոյց տալու և այս յարկութեամբ կոտորուելու: Սենտիմենտալիստը չըկարողացաւ մօտեցնել կրթած դասակարգը ժողովրդին, որովհետեւ հիւանդոտ կերպով լարւած նետրոնների վրայ այլ ևս չէր ազդում իրականութիւնը իւր սովորական դժբերով:

Սենտիմենտալիստը թէ Արեւմուտքում և թէ Ռուսաստանում շուտով տեղի տեց աւելի ամփոփ ուղղութեանը, ուսման տրամին: Բայց Կարամզինի անունը նոյն իսկ Պուշկինի օրով շատ մեծ էր,

որովհետեւ նրա Դերը բացառիկ էր մանաւանդ լեզւի զարգացման մէջ: Նա գիրակցօրէն հակառակ գնաց սլաւոնականութիւններին, յայտարարելով, որ սլաւոններէնը ռուսներէնից արարքեր լեզու է, և նոր գաղափարների արտայայտութեան համար Դիմեց բուն ռուսերէնին, նախադասութիւնները կազմելով ոչ թէ լատիներէնի, այլ Ֆրանսերէնի հետեւողութեամբ: Նրա լեզուն թեթեւ է և հնչուն, բառերի շաստաւորութիւնը համապատասխանում է մտքերի յաջորդութեանը: Կարամզինը մտքեց բազմաթիւ նոր ինքնահնար բառեր, չէր խուսափում օտար բառերից, երբ համապատասխանը չէր գտնում մայրենի լեզւի մէջ: Նրա գրեածքների աշոյղութիւնը կախած էր մանաւանդ նրա ոճից: Նրա գրականական գործունէութեան սկզբունքն էր ոչ թէ սովորեցնել, այլ միայն զբաղեցնել ռուս հասարակութիւնը զարմալի կերպով, չփրաւորելով ճաշակը ոչ բիրտ փգիտութեամբ, ոչ էլ ըարըարոյս ոճով:

Ռուսաց գրականութեան վիճակի վրայ XIX Դ. սկզբում՝ ազդեց նաեւ Կարամզինի անձնաւորութիւնը իւր մեղմութեամբ և առանձին հրապօրոյժ: Նա առաջինն էր ռուս գրողներից, որ իւր ամբողջ կեանքը նւիրեց գրական աշխատանքին. նա առաջինը իւր փաշանդով, կրթութեամբ և բարոյական յարկութիւններով բարձրացրեց գրականագէտի անունը իւր հայրենիքում:

Կեղծ շասականութեանը աւելի զգալի հարեածը տւեց ռոմանտիսմը, որի հայրենիքն էր Գերմանիան: Այստեղ անցեալ Դարի կէսից սկսեցին աւելի մօտիկից ծանօթանալ յունական և հռոմայական հեղինակութիւնների հետ և նկատեցին, որ Ֆրանսիական ուղղութիւնը սխալ է շասական անւանում—նա չունի հին աշխարհի գրականութեան ոչ անմիջական ոգևորութիւնը, ոչ էլ կապը շրջակայ կեանքի հետ: Միևեոյն ժամանակ Հերդերը Դիմեց «ժողովուրդների ձայնին», ժողովրդական երգերին և այնտեղ գտաւ թէ բարոյական զգացմունք և թէ ճշմարիտ գեղեցկութիւն: Լեոնինգը հերքեց կեղծ շասականութեան տեսական հիմունքները, ցոյց տալով բանաստեղծութեան իսկական էութիւնը: Երեւցին մի շարք երիտասարդ բանաստեղծների, որոնք ամեն կողմից յարձակում գործեցին հին ուղղութեան վրայ: Այս ժամանակը յայտնի է Sturm und Drang-Periode (ձգտման և յարձակման շրջան) անունով:

Ինչպէս կեղծ շատականները շիմել էին հին աշխարհին, այնպէս այս բանաստեղծները շիմեցին նախ միջին դարերին և վերջին ժողովրդշական արտագրութիւններին. նոր ուղղութիւնը վերջը կոչեց ռոմանտիսմ, ռոմանական ազգերի անունով, որոնք միջին դարերում դուրս եկան պարսկական ասպարէզը: Այս դպրոցը քարոզում էր, որ բանաստեղծի ոգևորութիւնը ազատ է, չի ենթարկուում որևէ կանխակալ կանոնների և ամեն տեղ որոնում է և գտնում գեղարվեստական նիւթ: Նրա համար բաց են բոլոր ազգերի գրականութիւնները: Նեկսպիրը դառաւ այս ուղղութեան իդէալը իւր անմիջական ստեղծագործութեամբ և կեանքն ու գրականութիւնը միացնելու ընդունակութեամբ:

Բայց սկզբում մանուկ ռոմանտիսմը, չափազանց ոգևորելով միջին դարերի անկեղծ և պարզ բանաստեղծութեամբ, իդէալացնում էր տգիտութեան այս ժամանակները և՛ միջնադարեան առասպելների ու աւանդութիւնների հետ, գրականութեան մէջ վերականգնում էր և ասպետական նախապաշարումներն ու անորոշ կրօնական ձգտումն շէպի գերբնականը և հանդերձեալ կեանքը: Կարծես մոռացւեց այն ամբողջ գաղափարական առաջադիմութիւնը, որ տեղի էր ունեցել վերջին դարերում: Ստատիստներ, չարագուշակ ագռաւներ, մշուշապար երեկոներ, պուրակի սուեբախիտ հովանին, գերեզմանական խաղաղութիւն, ուրականներ — ահա այսպիսի պարկերներ սկսեցին գլխաւոր տեղ բռնել մանուկ ռոմանտիկների գլուխածքների մէջ: Բայց այնպիսի հանձարներ, որպէս էին Գէօթէն կամ Շիլլերը, շուտով դուրս եկան այս մէգաւոր աշխարհից և տւին այնպիսի ստեղծագործութիւններ, ուր տիրում են պարզորոշութիւնն ու իրականութիւնը: Ժողովրդական, որի օրով արդէն փառքի գագաթնակէտին էին հասած գերմանական բանաստեղծութեան այս երկու հսկաները, հետեւեց ոչ թէ սրտից ցուցմունքներին, այլ մանուկ ռոմանտիսմի ծայրահեղ ներկայացուցիչներին և խորասուզեց ուրականների ու հրաշքների աշխարհը՝ ազդարարութիւն փալով անուրջներին ու երագներին: Այս անգամ էլ նոր ուղղութիւնը մտաւ ռուսաց գրականութեան մէջ այն ժամանակ, երբ արդէն ընկնում էր Արեւմուտքում և փոխում ազգային ռոմանտիսմի ժողովրդական յայտնի եղաւ գլխաւորապէս իւր թարգմանութիւններով, բայց նա

գերմանական, ֆրանսիական և անգլիական գրականութիւններից իւրացնում էր միայն այն, ինչ որ խորհրդաւոր էր, երեւակայական, անըջային, մեղամաղձոր, և խուլ էր մնում այն ամենի համար, ինչ որ կրում էր հասարակական սթափման կամ անկախ մտքի պահանջների կնիք: Նա ընդունում էր, որ կեանքը պէտք է առաջադիմի, բայց այս թող կատարւի ինքն իրան, առանց կռիւ. մարդս պէտք է անդադար աշխատի և օգուտի կեանքի բարիքներից չիւր տնդում, իւր շրջանում: Մենք պէտք է հաւատանք, հաւատանք և հաւատանք: Նա քարոզում էր իսկապէս անդորրութիւն, մինչդեռ Sturm-und Drang-Periode ի ռոմանտիկները աղմուկ էին հանում և կռիւ էին մղում յանուն գրական և հասարակական իդէալների:

Ընդամենական հանգամանքները (նա ապօրինի զաւակ էր մի ռուս ազնւականի ու փաճիկ աղջկայ և մեծացել էր կանանց շրջանի մէջ), դպրոցի ազդեցութիւնը (Նովիկովի ընկերների շրջան), անձնական դժբախտութիւնը—անբախտ սէրը—այս ամենը ժուկովսկու մէջ առաջ էին բերել մեղամաղձոր, թախծալի տրամադրութիւն, որը իստուն էր կիսաբանաստեղծական, կիսակրօնական հաւատի հետ դէպի հանդերձեալը և քնքոյշ զգացմունքի հետ: Նա դիտմամբ երեսը շուտ էր տալիս իրականութիւնից և ընկղմւում իւր անուրջների մէջ. նա հաւատում էր այս և այն աշխարհների հաղորդակցութեանը և մերձաւոր հոգիների յաւիտեական անջինջ կապերին և միաւորմանը, գոնէ միւս աշխարհում: Նա, ուղիղ է՝ մտքեց բանաստեղծութեան մէջ ստրանաներ, կախարդներ, բուեր, ագռաւներ, բայց միւս կողմից նրա ոտանաւորները լի էին այնպիսի իդէալական ձգտումներով դէպի անորոշ բարութիւնը, գեղեցկութիւնը, դէպի վեհը և անյայտ հեռուն, որ անկասկած՝ ներշնչում էին ընթերցողին ազնուութիւն և իդէալականութիւն: Նա չըմտեցրեց երկինքը երկրին, այլ կամենում էր երկիրը բարձրացնել դէպի երկինքը: Մանաւանդ վսեմ է նրա հայեացքը բանաստեղծութեան ալբիւրի և նշանակութեան վրայ: Բանաստեղծութիւնը Ասուածային պարգև է, նա «երկնային կրօնի երկրային քոյրն է», նա «Ասուած է երկրի սուրբ անուրջների մէջ, նա առաքինութիւն է»: Ասելով «կեանքն ու բանաստեղծութիւնը—մէկ է», նա անգիտակցօրէն հարւած էր տալիս

Թէ կեղծ շասականութեանը և թէ սենտիմենտալիստին: Բանաստեղծութիւնը պէտք է ազդեցութիւն ունենայ ազգի հոգեկան կեանքի, նրա կրթութեան վրայ (Ժուկովսկին աղապարտութիւն Կռեցիւր ճորտ գիւղացիներին): Այսպիսով նա շրեց բանաստեղծութիւնը անհասանելի բարձունքի վրայ: Ժուկովսկու նշանակութիւնը և նրա մէջն է, որ նրա ջանքերով ռուս ոտանաւորի լեզուն կազմեց և կարող էր երգել արդէն ամենաքնքոյշ զգացմունքներ: Մարդիկ լսում էին և նրանց սրտերը լցում էին վեհ փափազներով, այժմ կարող էր երեւալ նա, որի մասին Բէլինսկին ասում է թէ նրա բանաստեղծութիւնը երկիր է՝ երկնքով թափանցւած, — Պուշկինը:

Այսպիսով XIX դարի սկզբում ռուսաց գրականութիւնը չէր շարարում նմանողական լինելուց — նա շարունակ իւրացնում է Արեւմտեան ուղղութիւնները, բայց ամեն անգամ այն ժամանակ, երբ նրանք այնտեղ արդէն մտնում են անկման, այն էլ՝ իւրացնում է գլխաւորապէս ձեւերը, արտաքինը, իսկ ներքինը, «մտքերի կապը», հասարակական բովանդակութիւնը՝ ոչ, XVIII դարում մտած ուղղութիւնները բոլորն էլ ունէին Ալեքսանդր Ա-ի օրով իրանց նշանաւոր ներկայացուցիչները — Դեռ կենդանի էր Դերժաւինը և իւր ընկեր Շիշկովը, Օգերովը, որը գրում էր կեղծ շասական ողբերգութիւններ և անուն հանում: Կարամզինը Դեռ չէր փակել իւր «Պատմութիւնը» գրելու համար, Ժուկովսկին նոր էր բարձրանում: Այս ժամանակ երեաց և մի նոր փաղանդ, որին աւելի մեծ իրաւունքով կարելի է անւանել Պուշկինի անմիջական նախորդ, քան թէ Ժուկովսկին, — Բալտիշկովը: Նրա բանաստեղծութիւնը աւելի հարուստ է ներկերով և աւելի է կապւած մարդկային երկրի հետ: Նրա մէջ չըկան արդէն միջնադարեան երեակայական պատկերներ, ընդհակառակը ստեղծագործութիւնը ձգտում է իրական գծերի: Նրա կանոնն էր՝ «Գրիր, ինչպէս ապրում ես»: Այս պատճառով նրա բանաստեղծութիւնը ունէր «իրականութեան հրապուրիչ գեղեցկութիւն»: Բարիւշկովը ամեն տեղից էր հաւաքում իւր նիւթը, ամեն գրականութիւններից, բայց միշտ իւր ընտրած նիւթը ոչ թէ լծարգմանում էր, այլ նորից մշակում ինքնուրոյն կերպով: Նա ուրախ հայեացք ունէր կեանքի վրայ, և նրա ոտանաւորները հընչում են անվիշտ ու ազատ կեանքի հոգսերով: Միայն վերջը, երբ նա

վերադարձաւ Ազատարար պատերազմից (1812 թ.), երբ բանաստեղծի ողին պահանջում էր հասարակական գործունէութիւն, չէր գտնում աշխատելու և իւր անգորութիւնը զգում. երբ և սէրն էլ անաջող եղաւ, նրա ուրախաւորների մէջ սկսեցին լաւել յոռեպետ և հիասթափուած ձայներ (1822 թ. նա խելագարուեց): Բատիւշկովի մէջ Փրանսիական հեղինակների ընթերցանութիւնը արծարծեց խորին սէր դէպի կրթութիւնն ու մոքի անկախութիւնը, յարգանք դէպի մարդկային արժանաւորութիւնը, ազնիւ մտաւոր աշխատանքն և գրողի կոչումը: Բայց Բելինսկու ասելով՝ «Բատիւշկովի մոտան շրջում էր օտար երկրների տակ և ոչ մի ծաղիկ չի քաղել ուստաց հողից»: Նրա ամենամեծ արժանիքը լեզունն է: Ժողովակին անգամ չունէր Բատիւշկովի պէս նուրբ ձևերի ճաշակ: Նա նպատակ էր դրել ստեղծել «Թեթև բանաստեղծութիւն», նրա ուրանաւորների սահուն, թեթև լեզուն օրինակ դառաւ Պուշկինի համար: Պուշկինին ու Բատիւշկովին մօտեցնում էր մի բան էլ—աւտելութիւնը դէպի XVIII դարի հնացած գրական աւանդութիւնները:

XIX դ. սկզբում, ուստաց կեանքի պայմանների համեմատ, «հայերի և որդոց» կոչւր տեղի ունեցաւ գրական և մանաւանդ լեզուական խնդիրների շրջանում: Գրական լեզուի մէջ Կարամզինի մոցրած նորոգութիւնը սաստիկ հակառակութիւն գրգռեց կեղծ դասական ուղղութեան մարդոց կողմից, որոնց գլուխ կանգնեց Շիշկովը: Սա 1803 թ. հրատարակեց մի հետազօտութիւն «Իստաց լեզուի հին և նոր ոճերի մասին», ուր մեղադրում էր հեղինակներին, որ օտար բառեր են գործածում, կազմում են նոր բառեր և դարձաձքներ ոչ թէ սլաւոներէնին հետեւելով, այլ Փրանսերէնին: Ինքը Շիշկովը սլաւոներէնը լաւ չըգիտէր և գեղարեստական ճաշակից բոլորովին զուրկ էր: Նրա գրաձքին խնդր արատաւանեց Կարամզինը և իւր կուսակցութիւնը: Այն ժամանակ Շիշկովը, տեսնելով որ երիտասարդ գրականագէտները աւելի և աւելի վտանգաւոր են դառնում, հիմնեց 1811 թ. մի պաշտօնական ընկերութիւն՝ «Бесѣда любителей российской словестности», որի նիստերը լինում էին Գերժաւինի տանը: Այս ընկերութեան անդամները պարտաւոր չէին հասակի և դիրքի մարդիկ էին, մեծ մասամբ բարձր պետական պաշտօնեաներ: Կազմութիւնը չիչեցնում էր պետական խորհուրդը,

անշամները ներկայ պիտի գտնուէին անսպարճառ նշանազգեստներով, և շքանշաններով: Ընկերութիւնը ամեն կերպ պիտի ընդդիմադրէր նոր ուղղութեանը, որի դէմ Շիշկովը գործ էր դնում նոյն իսկ մասնութիւն, գրախոսութիւն և կառնականութիւն: Այն ժամանակ կարամզինականները պատասխանեցին կեղծ դասականութիւնը պաշտպանող այս պատկառելի ժողովին ծաղրանքներով, երգիծաբանութիւններով և կազմեցին մի առանձին մասնաւոր շրջան, որը կուէեց Արզամաս, իբր թէ ժողովները լինում են փոքրիկ, աննշան Արզամաս քաղաքում, որը յայտնի էր իւր բաղերով և արբերի պարկերներ նկարող ճեմարանով: Անշամ կամ ընտրին զերազանցութիւն հանճար Արզամասի էին իմիջի ալլոց Կարամզինը (որը շուտով հեռացաւ), Ժուկովսկին, Բարիշկովը, Վասիլ Պուշկինը՝ մեծ բանաստեղծի հօրեղբայրը, վերջը ինքը Ս. Պուշկինը: Արզամասցիները հաւաքուում էին մասնաւոր տներում, առանց որ և է ձեռնակութիւնների. ամեն մի անշամ ունէր իւր յատուկ անունը, օրինակ՝ Բարիշկովը «Աքիլէս», Ժուկովսկին «Սեւալանա»: Նոր անշամը պէտք է գովասանական ճառ ասէր իւր հանգուցեալ նախորդի մասին, բայց որովհետեւ ընտր Արզամասի բոլոր անշամները անմահ էին, ուստի նա պէտք է մեռելներ փոխ առնէր «Вечда»-ի և «ճեմարանի» «քաղցեացիների միջից» (շիշկովականներից): Արզամասցիների զէնքը՝ սուր ծաղրն էր, կծու հեգնութիւնը: Այսպէս քննութեան էին ենթարկուում ոչ միայն ռուսաց, այլ և ևրոպական գրականութեանց ստեղծագործութիւնները և մշակուում էին երիտասարդ գրողների ճաշակներն: Նրեկոն վերջանում էր ուրախ ընթրիքով, որի ժամանակ անսպարճառ բերում էր «արզամասեան բաղը», և նորից սկսւում էին էպիգրամներ և կուպլետներ հակառակորդների մասին: Այս ընկերութեան ազդեցութիւնը ամբողջ հասարակութեան վրայ շատ մեծ էր: Սրա անշամները չունէին «Вечда»-ի պէս գրական կանոնագիրք. բայց շեկավարւելով տաղանդի և ճաշակի թելադրութեամբ՝ միշտ ճիշդ գնահատութիւն էին տալիս գրականութեան նոր երկերին, արուում էին փքուն և հանդիսաւոր ձևերը, հալածում էին ամեն զեղարեստական դատարկաբանութիւն: Ամբողջ ուղղութիւնը քննական էր և նպաստեց լեզուի ու մասամբ գրականութեան ինքնուրոյն սկզբունքների պարզաբանութեան. երբ

Ֆրանսիացիք Նապոլէօնի առաջնորդութեամբ արշաւեցին Ռուսաստան:

„Восста“-ի և «Արգամասի» զաշափարները տարբեր էին և քաղաքական ու հասարակական խնդիրների մասին: Երբ մօտեցաւ 1812 թ. Շիշկովը բացարձակ կերպով հրատարակեց, որ նոր հեղինակները մեղաւոր են ոչ միայն «Ֆրանսիական ժանտախտի», այլ Նապոլէօնի արշաւանքի ու Մոսկւայի հրդեհի համար: Նրա ընկերները պախարակում էին Պետրոս Մեծի գործունէութիւնը և գովաբանում հին Ռուսաստանը, ուր գտնւում էին իսկական ազգային հոգի և միութիւն ժողովրդի բոլոր խաւերի մէջ: Վերջը՝ այս մարտիկ յառան հալածիչներ եւրոպական ամեն տեսակ աղդեցութիւնների և կաղմեցին սլաւոնասէրների կուսակցութիւն: Իսկ արգամասցիներից, օրինակ՝ Բապիւշկովը ահա ինչ էր գրում. «Ո՛չ, անկարելի է ռուսաց պապութիւնը սառնասիրտ կարգալ... Ես հարիւր անգամ սկսել եմ, և միշտ իզուր: Նա հետաքրքրական է սկսում յառնալ միայն Պետրոս Մեծի օրերից... Հայրենիքը սիրել պէտք է: Ով որ նրան չի սիրում, նա անզգայ է: Բայց կարելի է սիրել արդեօք պոպութիւնը: Կարելի է արդեօք սիրել այն սովորութիւնները, բարքերը, որոնցից մենք բաժանւած ենք շարերով, և աւելի ևս՝ լուսաւորութեան մի ամբողջ յարով: Քաղաքական խնդիրների մէջ որոշ ծրագիր չունենալով հանդերձ, անգամասցիները ձգտում էին արեւմտեան լուսաւորութեանը և հաստատ յոյսերով նայում էին եւրոպական գիտութեան վրայ, որը միայն կարող է վերացնել ռուսաց կեանքի անկարգութիւնները: այս մարդկանց շարքերից շուրս եկան «արեւմտականները» (западники): 1817 թ. «Արգամասի» ընկերական շրջանը ցրեց, մասամբ նրա համար, որ գլխաւոր ձեռներէցները Պետերբուրգից հեռացան. մասամբ էլ նրա համար, որ սկսեցին երեւալ նոր անդամներ, որոնք շրջում էին քաղաքական խնդիրներով զբաղելով—ընկերութիւնը գերադասեց չփոխել իւր գրական բնաւորութիւնը և աննկատելի կերպով լուծեց: Բայց այնուհետեւ էլ արգամասցիները անդաւաճան, անխախտ բարեկամութեամբ կապւած էին իրար հետ և միշտ իրար ոգևորում էին և սիրտ էին տալիս ազնիւ և անշահասէր գործելու կեանքի այն յժժար պայմաններում, որոնք սկսեցին Ռուսաստանում Ալեքսանդր I-ի թագաւորութեան

վերջին թւականներին և Նիկոլայ I-ի ամբողջ կառավարութեան միջոցին: Սակայն երկու կուսակցութիւնների այս կռիւը աւելի և աւելի պարզեց, որ գրականութիւնը այլ ևս չի կարող առաջ գնալ սլաւոնա-ռուսական կեղծ-դասական ուղղութեամբ:

Չնայելով, որ արդէն մի քար էր անցել Պետրոս Մեծի օրից և որ արդէն անհաշոյ վիճաբանութիւններ էին ծագել գրականական և մասամբ քաղաքական գաղափարների մասին, այնու ամենայնիւ այս ամբողջ շարժումը տեղի էր ունենում սահմանափակ շրջանի մէջ: Դեռ ևս, ինչպէս նկատեց Կ. Ստալը, „quelques gentils-hommes se sont occupés de littérature“ (միայն մի քանի ազնւականներ էին զբաղւած գրականութեամբ): Ընթերցողների թիւը մեծ չէր: Գրականութիւնը իւր տակը հող չունէր. նա արտայայտիչ էր շատ-շատ մի փոքրիկ շրջանի հասարակական տրամադրութեան և ամեն կողմից բաց էր յարձակումների համար. ամեն մէկը կարող էր որոնել նրա մէջ թոյլ չուած մտքեր և սխալ ուսմունքներ, և այսպիսի յարձակումների դէմ նա չէր կարող պաշտպանւել գրական խիստ հսկողութեան շնորհիւ: XIX Դ. սկզբում գրականութիւնը շարունակում էր դեռ կրուած լինել ժողովրդից, որին յայտնի չէին ոչ նրա հասարակական ձգտումները, ոչ էլ նրա դրական ձեւերը. նոյն իսկ լեզուն մատչելի չէր ժողովրդին, եթէ գործ էին ածուում խօսակցական լեզուից Դուրս բառեր: Բայց այս երևոյթի պատճառը այն էր, որ ամբոխի համար չկային Դպրոցներ, որոնք կարողանային ընդարձակել նրա մի փոքր սովորական գաղափարների պաշարը: Յաջորդ սերունդների գործը պիտի լինէր, մի կողմից՝ մօտեցնել գրականութիւնը ժողովրդին իրական բովանդակութիւն մտցնելով բանաստեղծութեան մէջ, միւս կողմից՝ բարձրացնել ժողովուրդը մինչև գրականութիւնը: Այս գործի մէջ Պուշկինը բռնում է պատւաւոր տեղը:

Այսպիսով՝ XIX Դ. սկզբում արդէն մշակւած էր թէ արձակ և թէ ոտանաւոր ռուս լեզուն, արդէն պարզաբանւած էին մի քանի գրական հարցեր, ձեռք էր բերւած ընթերցողների մի յայտնի քանակութիւն: Արդէն սկսում էր զարթոնել հասարակական միտքը, թէև ուղիղ է՝ դեռ միայն մի քանի ընկերական, սահմանափակ շրջանների մէջ: Մինչև այդ ժամանակ գրական գործիչները, իւ-

րացնելով եւրոպական բանաստեղծական ձեւերը, չէին կարողանում տիրել նրանց դաշափարական բովանդակութեանը. այժմ կարծես հասարակական հաստատ համոզմունքներ կազմելու փորձերն են լինում: Աւելի յաճախ խօսւում է ժողովրդի մասին, ինտելիգենցիայի և քննադատ ազգի յարաբերութեանց, վերջապէս և պատմական անցեալի մասին: Գրականութիւնը արդէն վարանող քաջերով մօտենում է կեանքին, թէեւ շատ հեռու է նրանից: Պուշկինի համար այս ամենը պարտաւոր հոշ էր. նա օգուեց ամենից, ինչ որ հնի մէջ առողջ և արժանաւոր բան կար, վերջ տուեց գրական նախապարտաւորական շրջանին, և այնպիսի զարկ տուեց բանաստեղծութեանը, որ նրա ժամանակակիցները պնդում էին, թէ միայն նրանիցն է սկսւում ռուսաց նոր գրականութիւնը:

(Շարունակելի)